ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արմաշ համայնք
ՀՀ Արարատի մարզ, գ.Արմաշ, (0234)60051,

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 28

## ԱՎԱԳԱՆՈՒ 7-ՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության մասին օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով.

1. Արմաշ համայնքի 2019թ. տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի հաստատման մասին:
2. Արմաշ համայնքի ղեկավարի աշխատավարձի, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
3. Արմաշ համայնքի 2018թ. բյուջեի հաստատման մասին
4. Արմաշ համայնքի 2018թ. բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:
5. Գյուղապետարանի, մշակույթի տան 2018թ.-ի հիմնական միջոցների գույքագրման արդյունքների հաստատման մասին, և դուրս գրման տվյալների հաստատումը:
6. Արմաշ համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասի օտարման համաձայնություն տալու մասին:
7. Արմաշ համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական արտադրական նշանակության հողամասի և ինքնակամ կառուցված անասնագոմի օտարման համաձայնություն տալու մասին:
8. Գույքահարկի արտոնություն սահմանելու մասին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԴԱՐԲԻՆՅԱՆ ՌԱՖԻԿ

ՋԵՅՆԱԼՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ՋԵՅՆԱԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արմաշ համայնք
ՀՀ Արարատի մարզ, գ.Արմաշ, (0234)60051,

# Ո Ր Ո Շ Ու Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 29-Ն

## ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջով.

Հաստատել Արմաշ համայնքի 2019թ.-ի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը

### Տեղական տուրքերի դրույքաչափերը

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.

Հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա/ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 7500 /յոթ հազար հինգ հարյուր / դրամ:

բ/ սույն կետի ,,ա/,, ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15.000 /տասհինգ հազար/ դրամ:

- 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25.000 /քսանհինգ հազար/ դրամ:
- 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25.000 /քսանհինգ հազար/ դրամ:
- 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50.000 /հիսուն հազար/ դրամ:

գ/ ոչ հիմնական շենքերի շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1500 /մեկ հազարհինգ հարյուր/ դրամ:
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ:

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների /բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա/Չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի զաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 3000 /երեք հազար/ դրամ:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի/ թույլտվության համար՝ 5000 /հինգ հազար/ դրամ:

4.Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝100.000 /մեկ հարյուր հազար/ դրամ:

5.Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական և սպասարկման նորոգման ծառայության

օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 20.000 /քսան հազար/ դրամ:

6.Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա/ ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինություններրի ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4000 /չորս հազար/ դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5200 /հինգ հազար երկու հարյուր/ դրամ.
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6700 /վեց հազար յոթ հարյուր/ դրամ.
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10200 /տասը հազար երկու հարյուր / դրամ.
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12700 /տասներկու հազար յոթ հարյուր/ դրամ.
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22700 /քսաներկու հազար յոթ հարյուր/ դրամ.

բ/ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակիհամար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինություններրի ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4000 /չորս հազար/ դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5200 /հինգ հազար երկու հարյուր/ դրամ.

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինություններում ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6700 /վեց հազար յոթ հարյուր/ դրամ.
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10200 /տասը հազար երկու հարյուր / դրամ.
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12700 /տասներկու հազար յոթ հարյուր դրամ.
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22700 /քսաներկու հազար յոթ հարյուր դրամ.

7.Համայնքի վարչական տարածքում՝ բացօթյա առևտուր կամակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 175 /մեկ հարյուր յոթսունհինգ/ դրամ մեկ քառակուսի մետրի համար:

8.Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին, բաղնիքներին /սաունաներին/, ժամը $24^{00}$- ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար սահմանվում է

ա/ առևտրի օբյեկտների համար 15.000 /տասնհինգ հազար/ դրամ:

բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 30.000 /երեսուն հազար/ դրամ:

գ/ բաղնիքների /սաունաների/ համար 150.000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ:

դ/ խաղատների կազմակերպման համար 300.000 /երեք հարյուր հազար/ դրամ:

ե/ շահումով խաղերի կազմակերպման համար 150.000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ:

զ/ վիճակախաղերի կազմակերպման համար 50.000 /հիսուն հազար/ դրամ:

9.Համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա/ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 /հինգ հազար/դրամ.
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7500 /յոթ հազար հինգ հարյուր/ դրամ.
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10.000 /տասը հազար/ դրամ.
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 /տասնհինգ հազար/ դրամ.
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25000 /քսանհինգ հազար/դրամ.

բ/ ոչ հիմնական շինությունների ներսում.

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 500 /հինգ հարյուր/դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 /մեկ հազար/դրամ.
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 /երկու հազար /դրամ.
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 /չորս հազար/ դրամ.
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7500 /յոթ հազար հինգ հարյուր/ դրամ.
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12500 /տասներկու հազար հինգ հարյուր/ դրամ.

10.Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա/ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 /մեկ հազար/ դրամ:

բ/թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1750 /մեկ հազար յոթ հարյուր հիսուն/ դրամ:

գ/ այլ արտաքին գովազդի համար՝ 750 /յոթ հարյուր հիսուն/ դրամ:

11.Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի 5000 /հինգ հազար/ դրամ:

Տեղական վճարների դրույքաչափերը

Համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ տեսակները՝

1/համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար10.000 /տասը հազար/ դրամ:

2/տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողեր հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 3000 /երեք հազար/ դրամ:

3/տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար 3000 /երեք հազար/ դրամ:

4/Արմաշ համայնքում սահմանել աղբահանության վճար՝

4.1/ ֆիզիկական անձանց նկատմամբմեկ շնչի հաշվով ամսեկան 100 /մեկ հարյուր/ դրամ:

4.2/ իրավաբանական անձանց նկատմամբ՝

4.2.1/ առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով՝ 1 քմ - 10 դրամ:

4.2.2/ արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով 1 քմ - 2 դրամ:

4.2.3/ կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ 1 քմ - 1 դրամ:

5/Արմաշ համայնքում սահմանել կոյուղու վճար մեկ շնչի հաշվով տարեկան 2400 /երկու հազար չորս հարյուր/ դրամ:

6/Համայնքի արխիվից փաստաղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար, տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 /մեկ հազար/ դրամ:

7/Արմաշ համայնքում <<Գառնի>> խմելու ջրի սակագինը սահմանել 136 /մեկ հարյուր երեսունվեց/ դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԴԱՐԲԻՆՅԱՆ ՌԱՖԻԿ

ՋԵՅՆԱԼՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ՋԵՅՆԱԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արմաշ համայնք
ՀՀ Արարատի մարզ, գ.Արմաշ, (0234)60051,

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 30-Ն

## ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ, 35-րդ հոդվածի 7-րդ կետերով, և ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով և 33-րդ հոդվածի պահանջներով.

Հաստատել Արմաշ համայնքի ղեկավարի աշխատակազմի, գյուղապետարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի /կցվում է/:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԴԱՐԲԻՆՅԱՆ ՌԱՖԻԿ
ՋԵՅՆԱԼՅԱՆ ՌՈԲԵՐՏ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱԼԲԵՐՏ
ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ
ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՄԱՆՈՒԿ
ՊԵՏՐՈՍՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ՋԵՅՆԱԼՅԱՆ

Հավելված 1

Արմաշ համայնքի ավագանու

07.12..2018թ. թիվ 30-Ն որոշում

ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 12
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄ/ |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | | 300000 |

ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ

| | | |
|---|---|---|
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 120000 |

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ

| | | |
|---|---|---|
| Աշխատակազմի քարտուղար /1.2.1/ | Թափուր | 150000 |
| Աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3.1/ | 1 | 140000 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1/ | 2 | 135000 |
| Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2.1/ | 1 | 105000 |
| Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3.1/ | 1 | 85000 |

ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ

| | | |
|---|---|---|
| ՕԿՋ-իպահակ, ջրբաշխ | 1 | 110000 |
| Գանձապահ | 1 | 110000 |
| Պահակ | 1 | 95000 |
| Հավաքարար | 1 | 95000 |
| Անասնաբույժ | 1 | 80000 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՋԵՅՆԱԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արմաշ համայնք
ՀՀ Արարատի մարզ, գ.Արմաշ, (0234)60051,

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 31-Ն

## ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ. ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

Հաստատել Արմաշ համայնքի 2019թ. բյուջեն եկամտային և ծախսային մասերով
ըստ հոդվածների

| | |
|---|---|
| ՀՈԴՎԱԾ 1. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԳԾՈՎ | 79636.3 |
| ԾԱԽՍԵՐԻ ԳԾՈՎ | 79636.3 |

ՀՈԴՎԱԾ 2. Հաստատել մուտքերը ըստ առանձին եկամուտների

| | |
|---|---|
| 1.Հարկային եկամուտներ | 14800.0 |
| ա/հողի հարկ | 3550.0 |
| բ/գույքահարկ | 9800.0 |
| նույն թվում անշարժ գույք | 3000.0 |
| փոխադրամիջոց | 6800.0 |
| գ/տեղական տուրք | 1450.0 |
| 2.Այլ եկամուտներ | 61836.3 |
| ա/վարձակալական հողերի վարձավճարներ | 3800.0 |

| | |
|---|---|
| բ/տեղական վճար | 4000.0 |
| գ/տեղական վճար աղբահանությունից | 3000.0 |
| դ/ ծնողական գումար | 3000.0 |
| և/ տեղական վճար անասնաբույժ. Ծառայությունից | 1000.0 |
| զ/ դոտացիա | 47036.3 |
| 3.Օտարումից մուտքեր | 3000.0 |
| **4. Գանձապետական հաշվի մնացորդ** | - |
| **Նույն թվում՝** | |
| **Վ/բ** | - |
| **Ֆ/բ** | - |
| **Վ/բ-ից Ֆ/բ-ին հատկացում** | - |

ՀՈԴՎԱԾ 3. Ծախսերի մասով ըստ դասակարգման

| | |
|---|---|
| 3-1Կառավարման ապարատ | 23617.0 |
| 3-2Նախադպրոցական կրթություն | 19808.714 |
| 3-3Նախադպ.հաստատ.հիմն. և վերան. | 1450.0 |
| 3-4Աղբահանում և սան. մաքրում | 2860.0 |
| 3-5Ջրամատակարարում /ընթացիկ նորոգում/ | 8300.0 |
| 3-6Կանաչ տարածքների պահպանում | 250.0 |
| 3-7Սոց անապահով անձանձ. | 2400.0 |
| 3-8Համայնքի մշակույթ և ազատ ժամանց | 2700.0 |
| 3-9Կրթություն/բարձրագույն/ | 900.0 |
| 3-10Փողոցների լուսավորություն | 1800.0 |
| 3-11Հասարակական կազմ. աջակցություն | 100.0 |
| 3-12Ընդհ. բնույթի տնտես. և առևտր. հարաբ. | 4250.0 |

| | |
|---|---|
| 3-13Հանգիստ , մշակույթ կրոն | 2000.0 |
| 3-14Գույքի գրանցման ծառայություն | 200.0 |
| 3-15Վարչական օբյեկտների հիմնանորոգում | 2000.0 |
| 3-16 Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում | 6000.0 |
| 3-17 Անասնաբուժ. ծառ. ձեռքբերում | 1000.0 |
| 3-18 Պահուստ վ/բ | 0.586 |

ՀՈԴՎԱԾ 4. 3-րդ հոդվածով սահմանված բյուջետային հատկացումների հաշվին ֆինանսավորվող ծառայությունները ըստ բյուջետային ծախսերի

4-1Համայնքի ղեկավարի աշխատակազմ

| | |
|---|---|
| Ընդամենը | 23617.0 |
| 4111 աշխատավարձ | 18720.0 |
| 4212 էլ.էներգիա | 1000.0 |
| 4213 կոմունալ ծառայություն | 70.0 |
| 4214 կապի ծառայություն | 300.0 |
| 4215 մեքեն.ապպահովագրություն | 35.0 |
| 4234 տեղեկատվական ծառայություն | 200.0 |
| 4221 ներքին գործուղում | 120.0 |
| 4232 համակարգչային ծառայություն | 200.0 |
| 4239ընդհան. բնույթի այլ ծառայ. | 60.0 |
| 4251 ընթացիկ նորոգում և պահպանում | 250.0 |
| 4252 մեքենաների ընթացիկ նորոգում | 650.0 |
| 4261 գրասենյակային նյութեր | 200.0 |
| 4264 տրանսպորտային նյութեր | 1000.0 |
| 4267 կենցաղային և հանրային սննունդ | 200.0 |
| 4269 հատուկ նպատակային նյութեր | 200.0 |
| 4823 մեքեն. տեխ.զննում | 12.0 |

| | |
|---|---|
| 5122 վարչական սարքավորումներ | 400.0 |
| 4-2 Նախադպրոցական կրթություն | |
| Ընդամենը | **19808.714** |
| 4-3 Նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում և վերանորոգում | |
| Ընդամենը | 1450.0 |
| 4269 հատուկ նպատակային նյութեր | 250.0 |
| 5113 շենք շինութ. կապիտալ վերանորոգ. | 800.0 |
| 5122 վարչական սարքավորումներ | 400.0 |
| 4-4 Աղբանում և սան. մաքրում | |
| Ընդամենը | **2860.0** |
| 4213 կոմունալ ծառայություն | 1000.0 |
| 4264 տրանսպորտային նյութեր | 1000.0 |
| 4269 հատուկ նպատակային նյութեր | 800.0 |
| 4823 պարտադիր վճարներ | 60.0 |
| 4-5 Ջրամատակարարում | |
| Ընդամենը | **8300.0** |
| 4213 կոմունալ ծառայություն | 1700.0 |
| 4251 ընթացիկ նորոգ. և պահպանում | 500.0 |
| 4269 հատուկ նպատակային նյութեր | 100.0 |
| 5112 շենքերի ու շինությունների շին. | 6000.0 |
| 4-6 Կանաչ տարածքների պահպանում | |
| Ընդամենը | 250.0 |
| 4269 հատուկ նպատակային նյութեր | 250.0 |

4-7 Սոց անապահով անձանց

| | |
|---|---|
| Ընդամենը | 2400.0 |
| 4726 թաղման նպաստ | 900.0 |
| 4729 նպաստ | 1500.0 |

4-8 Համայնքի մշակույթ և ազատ ժամանց

| | |
|---|---|
| Ընդամենը | 2700.0 |
| 4251 ընթացիկ նորոգում | 900.0 |
| 4239 ընդհան. բնույթի այլ ծառայություններ | 1400.0 |
| 4269 հատուկ նպատակային նյութեր | 400.0 |

4-9 Կրթություն/բարձրագույն/

| | |
|---|---|
| Ընդամենը | 900.0 |
| 4729 այլ նպաստ | 900.0 |

4-10 Փողոցների լուսավորություն

| | |
|---|---|
| Ընդամենը | 1800.0 |
| 4212 էլ.էներգիա | 600.0 |
| 5112 շենքերի և շինությունների կառուցում | 1200.0 |

4-11 Հասարարական կազմակ. աջակցություն

| | |
|---|---|
| Ընդամենը | 100.0 |
| 4819 նվիրատվություն | 100.0 |

4-12 Ընդհ.բնույթի տնտես. և առևտր. հարաբ.

| | |
|---|---|
| Ընդամենը | 4250.0 |
| 4213 կոմունալ ծառայություն | 250.0 |
| 4241 մասնագիտական ծառայություն | 200.0 |
| 4251 ընթացիկ նորոգում | 200.0 |

| | |
|---|---|
| 4252 սարքավ.ընթացիկ նորոգ. և պահպանում | 150.0 |
| 4264 տրանսպորտային նյութեր | 500.0 |
| 4239 ընդհան. բնույթի այլ ծառայ. | 1200.0 |
| 5122 վարչական սարքավորումներ | 250.0 |
| 5134 հատակագիծի նախագծում | 1500.0 |

4-13 Հանգիստ, մշակույթ կրոն

| | |
|---|---|
| **Ընդամենը** | **2000.0** |
| 4239 ընդհ. բնույթի այլ ծառայություններ | 1000.0 |
| 4269 հատուկ նպատակային նյութեր | 1000.0 |

**4-14 Գույքի նկատմամբ իրավունքների գրանցման**

| | |
|---|---|
| **Ընդամենը** | **200.0** |
| 4241 մասնագիտական ծառայություն | 200.0 |

4-15 Վարչական օբյեկտների հիմնանորոգում

| | |
|---|---|
| **Ընդամենը** | **2000.0** |
| 4251 ընթացիկ նորոգում | 1000.0 |
| 5113 շենք. շինությունների կապիտալ նորոգում | 1000.0 |

| | |
|---|---|
| 4-16 Ասֆալտ-բետոնյա ծածկի նորոգում | **6000.0** |
| 5113 շենք. շինությունների կապիտալ նորոգում | 6000.0 |

4-17 Անասնաբուժ. Ծառ. Ձեռքբերում

| | |
|---|---|
| 4241մասնագիտականծառայություն | 1000.0 |

4-18 Պահուստ վ/բ

| | |
|---|---|
| Ընդամենը | |
| 4891 պահուստային միջոց | 0.586 |

Կողմ -6

ԴԱՐԲԻՆՅԱՆ ՌԱՖԻԿ

ՁԵՅՆԱԼՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՅՈՒՐԻԿ

Դեմ -0

Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀԱԿՈԲ ՁԵՅՆԱԼՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
## ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արմաշ համայնք
ՀՀ Արարատի մարզ, գ.Արմաշ, (0234)60051,

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 32-Ն

ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

Ծախսային մաս

1. ,,Ընդհանուր բնույթի տնտեսական առևտրային հարաբ.,, գործառնական դասակարգման /բաժին 4 , խումբ 1, դաս 1, ծրագիր 55/ ծախսային ծրագրի տնտեսագիտական դասակարգման 4213 հոդվածիծախսն ավելացնել 13,0 հազ դրամով, Ճշտված պլանը սահմանել 231,5 հազ. դրամ, 4264 հոդվածի ծախսը պակասեցնել 200,0 հազ. դրամով,Ճշտված պլանը սահմանել 600,0 հազ. դրամ:
2. «Փողոցների լուսավորում» գործառնական դասակարգման /բաժին 6 , խումբ 4, դաս 1, ծրագիր 56/ ծախսային ծրագրի տնտեսագիտականդասակարգման 4212հոդվածիծախսն պակասեցնել 350,0 հազ. դրամով, Ճշտված պլանը սահմանել 650,0 հազ. դրամ:
3. «Նախադպրոցական կրթություն»գործառնական դասակարգման /բաժին 9 , խումբ 1, դաս 1, ծրագիր 51/ ծախսային ծրագրի տնտեսագիտական դասակարգման 4639հոդվածիծախսը ավելացնել 37,0 հազ. դրամով, Ճշտված պլանը սահմանել 16055,49 հազ. դրամ:
4. «Արմաշի ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում» գործառնական դասակարգման /բաժին 4, խումբ 5, դաս 1, ծրագիր 51/ ծախսային ծրագրի տնտեսագիտականդասակարգման 5113հոդվածի ծախսն ավելացնել 300,0 հազ. դրամով, Ճշտված պլանը սահմանել 10900,0 հազ. դրամ:

5. ,,Համայնքի հանգիստ, մշակույթ ու կրո,, գործառնական դասակարգման /բաժին 8 , խումբ 5, դաս 1, ծրագիր 55/ ծախսային ծրագրի տնտեսագիտականդասակարգման 4269 հոդվածիծախսը պակասեցնել 60,0 հազ. դրամով, ճշտված պլանը սահմանել 940,0 հազ. դրամ: 4239 հոդվածի ծախսն ավելացնել 60,0 հազ. դրամով, ճշտված պլանը սահմանել 1060,0 հազ. դրամ:

6. ,,Սոց. Անապահով անձանց,, գործառնական դասակարգման /բաժին 10 , խումբ 7, դաս 1, ծրագիր 54/ ծախսային ծրագրի տնտեսագիտական դասակարգման 4726հոդվածիծախսն ավելացնել 200,0 հազ. դրամ, ճշտված պլանը սահմանել 1156,0 հազ. դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԴԱՐԲԻՆՅԱՆ ՌԱՖԻԿ

ԶԵՅՆԱԼՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ԶԵՅՆԱԼՅԱՆ